«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»

ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ «Համագործակցային մեթոդների կիրառման հմտությունների ձեվավորումը անգլերենի դասերին»

ԱՌԱՐԿԱ՝ Անգլերեն

ՀԵՂԻՆԱԿ՝ Գայանե Մարտիրոսյան

ՄԱՐԶ՝ Ք.Երևան

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ՝ «Շ.Շահամիրյան» կրթահամալիր

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 2

Համագործակցային ուսուցման մեթոդներ 4

Օրվա դասի պլան 11

Եզրակացություն 15

Օգտագործված գրականության ցանկ 16

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Եթե ուսուցիչը սիրում է իր աշխատանքը, նա լավ ուսուցիչ կլինի: Եթե ուսուցիչը սիրում է աշակերտին, ապա նա ավելի լավ ուսուցիչ կլինի, քան նա, ով կարդացել է բոլոր գրքերը, բայց չի սիրում իր աշակերտին: Եթե ուսուցիչը սիրում է և իր աշխատանքը, և իր աշակերտին, նա կլինի կատարյալ ուսուցիչ»: Լև Տոլստոյ

Ուսուցիչն աշակերտների հետ իր հարաբերությունները պետք է կառուցի փոխադարձ հարգանքի հիման վրա: Նա պետք է հարգի աշակերտների անհատականությունը՝ անկախ նրանց տարիքային, սեռային, անձնային առանձնահատկություններից, սոցիալական ծագումից, հասարակական դիրքի կամ որևէ այլ կարգավիճակի հետ կապված հանգամանքից:

Աշխատանքի առաջնային նպատակն է բարձրացնել կրթության որակը և խթանել ուսանողների ներգրավվածությունը: Այն նաև նպատակ ունի խթանել միջանձնային հարաբերությունները ուսանողների միջև և նպաստել դինամիկ ուսուցման մշակույթի ձևավորմանը: Նպատակը ուսուցման գործընթացն ավելի ակտիվ, հետաքրքիր և համագործակցային դարձնելն է հատկապես խմբային աշխատանքի միջոցով:

Հետազոտության նպատակն է ուսումնասիրել և կիրառել կրթական համակարգում համագործակցային մեթոդների կիրառումը՝ հեշտացնելու օտար լեզվի արագ ուսուցումը՝ հնարավորություն տալով ուսանողներին արդյունավետ կերպով ընկալել նոր բառապաշարը, բառակապակցությունները և ժամանակաձևերի ուսումնասիրումը:

Հետազոտության օբյեկտը հանրակրթական դպրոցների աշակերտներին օտար լեզուներ ուսուցանելու համագործակցային մեթոդների խրախուսումն ու ընդլայնումն է:

Հետազոտության խնդիրները: Մեր հետազոտական նպատակներին հասնելու համար մենք պետք է լուծեինք հետևյալ խնդիրները.

1. Բացահայտեք թիմային աշխատանքի տարբեր մեթոդներ և ինչպես են դրանք օգտագործվում:
2. Համագործակցային մեթոդի կիրարռման տեղն ու դերը պարզելն է, թե որտեղ և

ինչպես օգտագործել թիմային աշխատանքը դպրոցում անգլերեն դասավանդելիս, գնահատել, թե որքանով են ուսանողները հասկանում և կիրառում այս մեթոդները՝ օգտագործելով աշակերտակենտրոն մոտեցում:

3. Մշակել անգլերենի դասավանդման գործընթացում թիմային աշխատանքի կիրառման ռազմավարություններ և սովորելն ավելի հաճելի դարձնել աշակերտների համար:

Համագործակցային մեթոդներն ու ռազմավարությունները կենսական դեր են խաղում նոր լեզվի ձեռքբերման ճանապարհին, քանի որ բազմիցս է ապացուցվել նրանց արդյունավետությունը:

Այս մեթոդները նպաստում են աշակերտներին սովորելուն և օգնում նրանց միջև դրական հարաբերություններ հաստատել: Անհրաժեշտ է կազմակերպել կառուցվածքային դասեր, որոնցում աշակերտները ոչ միայն լսում են, այլ խրախուսվում և առաջնորդվում են կիսվել իրենց գաղափարներով, օգնել իրենց հասակակիցներին և տրամադրել հետադարձ կապ:

«*Այսօր 21-րդ դարում, դեպի տեղեկատվական հասարակություն անցման այս փուլում անչափ կարեւորվում է կրթական քաղաքականության ճշգրտման ու մշակման խնդիրը, որը ենթադրում է ոչ միայն կազմակերպված ավանդական կրթական այլ նաեւ կրթության շարունակականությունն ապահովող համակարգերի վերակառուցումը:*

Այս հակասության լուծման ճանապարհին ստեղծվում են կրթադաստիւսրակչական գործընթացի կազմակերպման ու կատարելագործման բազմաթիվ ձևեր ու մոդելներ: Դրանցից մեկը վերջին ժամանակներս բավականին շատ քննարկվող ու արծարծվող համագործակցային ուսուցման մոտեցումն է:

Հարկ է նշել, որ ժամանակակից հոգեբանական գրականությունը հարուստ է ուսուցման գործընթացում համատեղ ուսուցման, հաղորդակցման ու համագործակցության արդյունավետության հիմանահարցի վերաբերյալ ամենատարբեր տեսական մոտեցումներով ու բազմազան ուսումնասիրություններով:

Համատեղ ուսումնական աշխատանքի մանրամասն ուսումնասիրություն հանդիպում ենք խ.Ի. Լիյմետսի, Դ.Բ էլկոնինի, Վ.Վ. Դավիդովի աշխատություններում: Վերջիններս առաջարկում են նկատի ունենալ հետեւյալ պայմանները.

- *Առաջադրել այնպիսի խնդիր, որը սովորողն անհատապես լուծել չի կարող,*
- *Ստեղծել երեխաների համատեղ գործունեությունն ապահովող խնդրի լուծման նյութական եւ նշանային միջոցներ:*

Այս տեսակտները խիստ համահունչ են ամերիկացի հոգեբան, մանկավարժ Դեյվիդ եւ Ռոջեր Ջոնսոնների մոտեցումներին, որոնք մշակել եւ ամբողջացրել են համագործակցային ուսուցման ժամանակակից մոտեցումները:

Ջոնսոններն առանձնացնում են համագործակցային ուսումնառության արդյունավետությունն ապահովող հետեւյալ բաղադրիչները.

- *դրական փոխկապակցվածություն, (positive interdependence)*
- *դեմ առ դեմ փոխազդեցություն (face-to-face interaction)*
- *անհատական հաշվետվություն եւ պատասխանատվությո*
- *սոցիալական հմտություններ*
- *խմբային գործունեության վերլուծություն (խմբային մշակում)»*

Հոգեբանություն, **Հեղինե Խաչատրյան** (էջ 208-210)

Համագործակցային ուսուցումը այլընտրանքային մանկավարժական մոտեցում է:

Այն ենթանդրում է խմբային աշխատանքի համագործակցության նոր մշակույթ: Համագործակցային ուսուցման կարևոր պայմաններից է խմբի անդամների միջև դրական աջակցող փոխկախվածության ապահովումը : Համագործակցային ուսուցման տարրերը ըստ Ջոնսոնների հինգն են՝

- **դրական փոխկախվածություն.**Խմբում ձևավորվում է միմյանց օգնելու, խրախուսելու, աջացելու մթնոլորտ: Սովորողի ջանքերն ուղղվում են ընդհանուր նպատակին համատեղ հասնելուն: Այն նպաստում է հանդուրժողականության և վստահության ձևավորմանը: Քննարկումներն ու ձգտումներն օգնում են խմբի անդամների փոխհարաբերություններին:
- **դեմ առ դեմ, խթանող փոխազդեցություն.** Խմբի անդամները համգործակցում են, փոխանակում են տեղեկություններ, կարծիքներ և ռեսուրսներ, մշակում և վերլուծում են տեղեկությունը, ապահովում են հետադարձ կապ, քաջալերում և աջակցում են միմյանց՝ ընդհանուր նպատակին հասնելու համար:
- **անհատական հաշվետվություն և պատասխանատվություն.** Խմբի յուրաքանչյուր անդամ պատրաստ է պատասխանելու և մտքեր փոխանակելու, կրում է պատասխանատվություն ուսուցման արդյունքների համար, խմբի մաս է, գաղափարներով և մտքերով կիսվում է մյուս անդամների հետ, պատրաստ է ներկայացնելու խմբի աշխատանքի արդյունքը:
- **սոցիալական հմտություններ.** Խմբի անդամների միջև ձևավորվում են վարքագծային նորմեր՝ անաղմուկ աշխատանք, ներկայություն մինչև աշխատանքի ավարտը, խոսողին հետևելը, առաջադրանքը կատարելիս ներդում ունենալը:
- **խմբային գործընթաց.** Խմբի անդամների հաջողությունների, փոխհարաբերությունների, համագործակցության բարելավման հետ կապված խնդիրների քննարկման փուլ է: Դրանք զարգացնում են սոցիալական

հմտությունները, ապահովում են խմբի անդամների գործողությունների մասնակցության հետադարձ կապը:

Համագործակցային Ուսուցման Խմբերի Տեսակները 3 Են՝

Համագործակցային ուսուցման ֆորմալ խմբերը փոքր են՝ 2-4 անդամ։ Հանձնարարականների ռազմավարությունը հետևյալն է՝

- խմբերը ձևակերպում են առաջադրանքը, լուծում այն և պատրաստվում ներկայացնել,պատահականորեն ընտրված խմբի անդամը ներկայացնում է խմբի աշխատանքի արդյունքը,
- բոլոր անդամները քննարկում են բոլոր լուծումները, տալիս հարցեր,
- յուրաքանչյուր խումբ պատրաստում և ներկայացնում է աշխատանքի հաշվետվություն։

Համագործակցային ուսուցման ոչ ֆորմալ խմբերը ժամանակավոր գործող խմբեր են, որոնք օգտագործվում են դասախոսության, դիդակտիկ նյութերի ցուցադրման, ֆիլմ դիտելու ժամանակ սովորողների ուշադրությունը ուսուցանվող նյութի վրա կենտրոնացնելու, ուսուցման ընթացքում օգտագործվող նյութերը նախապատրաստելու համար։

Համագործակցային հենակետային խմբերը կայուն անդամներով երկարաժամկետխմբեր են, որոնց աշխատանքը տևում է ողջ դասընթացի, ծրագրի շրջանակներում։ Խմբի անդամները միմյանց օգնում են, աջակցում, խրախուսում՝ նպաստելով առաջադրանքի կատարմանն ու գիտելիքների ձեռքբերմանը։ Դրանք մշտական են և ապահովում են երկարաժամկետ, գործընկերային փոխհարաբերություններ։

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐ

Համագործակցային ուսուցման մեթոդներն են.

1. Աշակերտների թիմային առաջադիմություն
2. Խճանկար
3. Շրջագայություն պատկերասրահում
4. Երեք բանալի և մեկ կողպեք
5. Հինգրոպեանոց ազատ շարադրանք

Աշակերտների թիմային առաջադիմության մեթոդ: Համագործակցային ուսուցման այս մեթոդը մշակվել է Ջոն Հոփկինսի համալսարանի պրոֆեսոր Ռոբերտ Սլավինի կողմից: Այս մեթոդը խթանում է աշակերտների ուսումնառությունը: Այստեղ էական է այն հանգամանքը, որ գնահատվում է աշակերտների առաջընթացը: Այս մեթոդը լուրջ խթան է ցածր առաջադիմությամբ աշակերտների համար, քանի որ նույնիսկ չնչին առաջընթացի պարագայում նրանք կարող են ներդրում ունենալ թիմի արդյունքում: Իսկ միջին ու բարձր առաջադիմությամբ աշակերտները պետք է մի կողմից՝ օգնեն իրենց դասընկերներին, մյուս կողմից՝ կարողանան պահպանել ու բարելավել իրենց նախորդ ցուցանիշները: Այս մեթոդի առավելություններից մեկն էլ այն է, որ հնարավորություն է տրվում գնահատելու և՛ առանձին աշակերտների, և՛ խմբերին:
Այն խթանում է սովորողների համագործակցությունը և մասնակցությունը: Մեթոդի կիրառության շրջանակներում կիրառվում է գնահատման այնպիսի համակարգ, որի պարագայում աշակերտը շահագրգռված է ոչ միայն իր, այլև խմբի բոլոր անդամների ուսումնառությամբ:
Այս մեթոդը լուրջ խթան է ցածր առաջադիմությամբ աշակերտների համար, քանի որ նույնիսկ չնչին առաջընթացի պարագայում նրանք կարող են ներդրում ունենալ թիմի արդյունքում: Իսկ միջին ու բարձր առաջադիմությամբ աշակերտները պետք է մի կողմից օգնեն իրենց դասընկերներին, մյուս կողմից կարողանան պահպանել ու բարելավել իրենց նախորդ ցուցանիշները: Այս մեթոդի առավելություններից մեկն էլ այն է, որ հնարավորություն է տրվում գնահատելու և՛ առանձին աշակերտների, և՛ խմբերին:

Խճանկար (Ջիգսո, Jigsaw): Խճանկարը համագործակցային ուսուցման մեթոդ է: Այն մշակվել և փորձարկվել է Տեխասի A&M համալսարանում՝ Էլիոթ Արոնսոնի և նրա գործընկերների կողմից, այնուհետև լրամշակվել է Սլավինի և վերջինիս գործընկերների կողմից: Խճանկարի փուլերն են.

- նյութի ուսումնասիրություն և տեղեկատվության հավաքում,
- աշխատանք փորձագիտական խմբում,
- աշխատանք ուսումնական խմբում,
- ավարտական աշխատանք,
- ամփոփում:

Շրջագայություն պատկերասրահում: Սա «Խճանկար» մեթոդի տարատեսակ է, որի նպատակն է փոխանակել տեղեկություններ, մշակել գաղափարներ և կատարել անդրադարձ, ինչպես նաև զարգացնել լսելու, ինքնուրույն աշխատելու, քննադատաբար և ստեղծագործաբար մտածելու, ցածրաձայն խոսելու, աշխատանքի արդյունքը ներկայացնելու հմտություններ:

Երեք բանալի և մեկ կողպեք: Աշխատանքը կարելի է կատարել զույգերով կամ խմբով: Այս մեթոդը կարելի է կիրառել այնպիսի դասերի իմաստի ընկալման փուլում, որոնք բավականին ծավալուն են, նույն նյութին կամ երևույթին վերաբերող մի շարք բնորոշ հատկանիշներ կան: Այս մեթոդով աշխատելիս աշակերտների մեջ ձևավորվում է ընտրություն կատարելու, գլխավորը երկրորդականից տարբերելու հմտություն, ինչպես նաև համագործակցելու, իր ընտրությունը հիմնավորելու կարողություն:

- **Հինգրոպեանոց ազատ շարադրանք**: Հինգրոպեանոց ազատ շարադրանքի մեթոդը կարող է կիրառվել ինչպես դասի խթանման փուլում, այնպես էլ կշռադատման՝ ելնելով դասի նպատակից և թեմայից: Ընտրում ենք թեման և առաջարկում հինգ րոպեի ընթացքում ազատորեն շարադրել իրենց մտքերը, որից հետո դադարեցնում են աշխատանքը և ունկնդրում մի քանիսի գրած շարադրանք:

Կախված դասի նպատակից և թեմայից, մենք ընտրում ենք ենք թեման և առաջարկում հինգ րոպեի ընթացքում ազատորեն շարադրել իրենց մտքերը, որից հետո դադարեցնում են աշխատանքը և ունկնդրում մի քանիսի գրած շարադրանք:

- **Խմբային հետազոտության մեթոդ: Համագործակցային ուսուցման մյուս մեթոդների** նման խմբային հետազոտությունը հիմնվում է աշակերտների փոխօգնության և համագործակցության վրա: Ի տարբերություն մյուս մեթոդների՝ խմբային հետազոտության հիմնական նպատակը կոնկրետ խնդրի ուսումնասիրությունն է: Թեև այս մեթոդի հեղինակը Թել-Ավիվի համալսարանի պրոֆեսոր Շարոնն է, բայց մեթոդի ակունքները սկիզբ են առնում 20-րդ դարի սկզբի հայտնի փիլիսոփա Ջոն Դյուիի տեսությունից: Դյուին գտնում էր, որ դպրոցը պետք է աշակերտներին սովորեցնի միասին աշխատել՝ նրանց ներգրավելով իմաստալից ուսումնական ծրագրերում, որպեսզի հետագայում այդ ամենը կիրառեն կյանքում:

Խմբային հետազոտություն կիրառող ուսուցիչը կարող է հետապնդել 3 փոխկապակցված նպատակ.

- Խմբային հետազոտությամբ աշակերտներին սովորեցնել համակարգված և վերլուծականորեն հետազոտել կոնկրետ խնդիրները,
- պայմաններ ստեղծել, որպեսզի աշակերտները խորությամբ յուրացնեն ուսումնական նյութի բովանդակությունը,
- սովորեցնել համագործակցել խնդրի լուծման հետազոտման ընթացքում:

Այսպիսով՝ այս նպատակների իրականացման արդյունքում խմբային հետազոտություն կատարող աշակերտները խորությամբ յուրացնում են ուսումնական նյութի բովանդակությունը, զարգանում են իրենց հետազոտելու և համագործակցելու հմտությունները:

DAILY LESSON PLAN

SUBJECT: English

TEACHER: Gayane Martirosyan

CLASS: 4th grade

DURATION: 45 minutes

LESSON TYPE: Practice your readingand analyze

Lesson Theme: Cinderella (Part One)

Book Title and Author: 'Cinderella' by G. Gasparya"

Page: 46-47, 58-59, 70-71

Դասի Նպատակները՝

- Բացահայտել և ըմբռնել տեքստում ուսումնասիրված թեմաները և խորանալ հեքիաթի մեջ: Ձեռք բերել գիտելիքներ բովանդակության մասին և հասկանալ պատմվածքի նշանակությունը:
- Տեքստից հանել և կիրառել խոսքի մասերի քերականական ձեւերը , ինչպիսիք են ածականների համեմատության աստիճանը, գոյականների եզակի և հոգնակի ձևերը և տարբեր տեսակի հարցեր:
- Հարստացնել բառապաշարը, սովորել նոր բառեր և բարելավել արտասանությունն ու ուղղագրությունը:

- Զարգացնել և կիրառել անգլերեն լեզվով կարդալու հմտությունները, ինչպես նաև աշխատանքը արդյունավետ ներկայացնելու կարողություն:
- Զարգացնել և ձևավորել խմբում հաղորդակցման հմտությունները ինչպիսիք են՝ լսել, խոսել, կարդալ, գրել:
- Խթանել ստեղծագործ մտածողությունը, ինչպես նաև երևակայական մտածողությունը:
- Վերլուծել խմբային գործողությունները և դրանց արդյունքները:
- Խթանել քննադատական մտածողության հմտությունները:

Վերջնարդյունք. Սովորողը կկարողանա՝

1. Հասկանալ և ըմբռնել տեքստի նոր բառապաշարն ու արտահայտությունները:
2. Տարբերակել հեքիաթի հերոսներին:
3. Դուրս բերել նույն նյութին կամ երևույթին վերաբերող մի շարք բնորոշ հատկանիշներ:
4. Կիրարել խոսքի մասերի քերականական ձևերը (noun.singular and plural, adjective. comparative and superlative, questions. general, special, alternative, tag questions. regular and irregular verbs)

Պահանջվող պարագաները՝ դասագիրք, պատկերազարդում

Մեթոդներ և մոտեցումներ՝ առաջադրանքների կատարման ռազմավարություն «Երեք բանալի և մեկ կողպեք»:

Դասի ընթացք

Գրատախակին գրել մեթոդի անունը՝ «Երեք բանալի եւ մեկ կողպեք» հրահանգել աշակերտներին հաշվել 1-3-ը եւ միեւնույն համարների միավորումով ձևավորել համապատասխան թվով խմբեր: (Բաժանումը պայմանավորված է նաշակերտների թվաքանակով)

Հեքիաթը բաժանել 3 մասերի խմբերի միջև՝ 3 մասի

I խումբ - առաջին հատված (էջ 46-47),

II խումբ - երկրորդ հատված (էջ 58-59)

III խումբ - երրորդ հատված (էջ 70-71)

Յուրաքանչյուր խումբ ուսումնասիրում է իրեն հանձնարարված հատվածը, քննարկում եւ որպես «բանալիներ» դուրս բերում տվյալ հատվածի հիմնական բովանդակությունն արտահայտող երեք նախադասություն եւ ձեւակերպում մեկ ամփոփիչ միտք, որը կհանդիսանա խմբի «կողպեք»-ը :

Օրինակ՝ Կողպեք (“Cinderella ”) – բանալիներ (two daughters, ugly, dirty dress, unhappy…)

Գնահատման չափանիշներ: Խմբերը կգնահատվեն իրենց նախընտրած ներկայացման ձևով՝ շարադրում, բացատրություն, ինչ-որ դիագրամի ներկայացում նկարների տեսքով), նոր նյութի ըմբռնում, բանավոր խոսքի հստակություն, տրամաբանական հաջորդականություն, ժամանակի ռացիոնալ օգտագործում և այլն:

Աշխատանքի կատարման ժամանակը՝ 25 րոպե:

Ընտրել խմբի աշխատանքը ներկայացնող աշակերտին:

Թեստ

1. Complete the sentences.

Cinderella had not ...

Her aunt and her daughters did not love Cinderella, because ... .

Cinderella worked very ... .

Poor Cinderella was in the kitchen ...

The ugly sisters wore ...

One day a message ... .

2. Choose the correct word.

This is ... story (a new, an old).

The aunt and her daughters ... Cinderella (didn't love, loved).

Poor Cinderella was in the ... all day (kitchen, garden).

The ugly sisters wore ... clothes (beautiful, dirty).

Cinderella was very ... (happy, unhappy).

The two ... sisters wanted to go to the dance (ugly, beautiful).

3. Make up sentences with the mixed words.

mother, and, Cinderella, not, father, had.

Cinderella, with, lived, aunt, her. her, two, aunt, daughters, had.

Cinderella, house, did, the, all, in, the, work.

Cinderella, in, poor, day, was, kitchen, the, all. one, the, day, from, King, a, came, message.

4. Answer the questions.

Why didn't Cinderella go to the dance?

With whom did ugly sisters go to the dance?

What did Cinderella do?

What did the little old lady say?

What had the old lady in her hand?

What did the little lady tell Cinderella?

Գնահատում

- Խմբի անդամների միջև համագործակցության աստիճանը
- Առաջադրանքների ձևակերպման հստակություն
- Առաջադրանքների համապատասխանեցում ընտրված մեթոդի, թեմայի և խմբերի հետ
- Հատկացված ժամկետի համապատասխանեցում
- Պահանջվող ռեսուրսների առկայությունը

Եզրակացություն

Համագործակցային ուսուցումը զգալի ազդեցություն ունի աշակերտների և ուսուցիչների համար: Մեթոդները, ինչպիսիք են «Երեք բանալի և մեկ կողպեք» եվ Խճանկար (Ջիգսո, Jigsaw) ուսուցման դասավանդման ժամանակակից մոտեցումները վճռորոշ դեր են խաղում առարկայի ավելի խորը ըմբռնման համար: Այս մեթոդների միջոցով աշակերտները սովորում են մասնատել բարդ թեմաներ էական հարցերով, կատարելագործելով գեղարվեստական ստեղծագործությունների գեղագիտական կողմերը ճանաչելու իրենց կարողությունը: Այս գործընթացը խթանում է վերլուծական մտածողությունը և աշակերտներին հնարավորություն է տալիս իմաստալից եզրակացություններ անել: Կարևոր է, որ ուսումնական գործընթացի բոլոր մասնակիցները ակտիվորեն ներգրավվեն և նպաստեն դասերին:

Համագործակցային ուսուցումն ապահովում է, որ խմբի յուրաքանչյուր անդամ կամ ամբողջ դասարանը ակտիվ դեր ստանձնի ուսումնական փորձի մեջ՝ թույլ տալով ուսանողներին ինքնուրույն զարգացնել և ձերք բերել նոր գիտելիքներ:

Գրականության ցանկ

1. Հեղինե Խաչատրյան <<Համագործակցային ուսուցման և ուսումնառության հոգեբանական առանձնահատկությունները>> Երեւան, 2006, էջ 208-210

2. Հովհաննիսյան Ա., Հարությունյան Կ., Խրիմյան Մ., Խաչատրյան Ս., Բայաթյան Ն., Ալեքսանյան Լ.,Պուրուկուրու Վ., Համագործակցային ուսուցում, Երևան, «Անտարես» հրատ., 2006, էջ 145
3. https://hy.wikipedia.org/wiki/%D5%80%D5%A1%D5%B4%D5%A1%D5%A3%D5%B8%D6%80%D5%AE%D5%A1%D5%AF%D6%81%D5%A1%D5%B5%D5%AB%D5%B6_%D5%B8%D6%82%D5%BD%D5%B8%D6%82%D6%81%D5%B8%D6%82%D5%B4
4. https://multiurok.ru/blog/hamagortsakts-ayin-owsowts-man-met-odnere.html
5. https://hanragitak.com/%D5%A1%D6%86%D5%B8%D6%80%D5%AB%D5%A6%D5%B4%D5%B6%D5%A5%D6%80%D5%B8%D6%82%D5%BD%D5%B8%D6%82%D6%81%D5%B9%D5%AB-%D5%B4%D5%A1%D5%BD%D5%AB%D5%B6/